ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀՌՅ-ԳՀԱՇՁԲ-19/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Գյումրիի կայանի H=180մ բարձրության հեռուստաաշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման, ներկման և Երևանի հաղորդիչ կենտրոնի տեխնիկական մասնաշենքի հարթ տանիքի վերանորոգման աշխատանքների /այսուհետ՝ Աշխատանք/ ձեռքբերման գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 09.01.2020 ժամը 12.00
Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝**
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/
Վ. Ավետիսյանը

**Անդամներ՝**
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ — Ռ. Սահակյանը, Գ. Սահակյանը
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ — Ա. Գևորգյանը, Գ. Զաքարյանը

**Հանձնաժողովի քարտուղար՝**
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ — Մ. Նիկոյանը

Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի ՀՀ պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 23.12.2019 հարցում է ուղարկվել առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ Պրոթերմ և ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ ՍՊ ընկերությունների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

1.2 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներից՝ Պրոթերմ և ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ ՍՊ ընկերություններից պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 26.12.2019 ժամը 12.00-ին, էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից 24.12.2019 առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն **/կցվում է/**:

2.2 Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը **/կցվում են/**:

3. <u>Հանձնաժողովը որոշեց.</u>

3.1 Հիմք ընդունելով վերոգրյալը՝ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել բավարար՝ և Պրոթերմ ՍՊ ընկերությանը՝ 1-ին չափաբաժնով, ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ ՍՊ ընկերությանը՝ 2-րդ չափաբաժնով **ճանաչել ընտրված մասնակիցներ**:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստերը՝ հայերեն և ռուսերեն լեզուներով /**կցվում են**/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ավետիսյան

անդամներ՝ Ռ. Սահակյան

Գ. Սահակյան

Ա. Գևորգյան

Գ. Զաքարյան

քարտուղար՝ Մ. Նիկոյան